

## **ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձն Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ**

Արմավիրի մարզի հարգելի՛ բնակիչներ, սիրելի՛ հայրենակիցներ, Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Կրկին մոտեցանք հին ու նոր տարվա սահմանագծին: Բազմադարյա պատմության էջերում շուտով կամփոփվի 2018 թվականը, որը հայ ժողովրդի նորօրյա պատմության մեջ կհավերժանա որպես համաժողովրդական հաղթանակի տարեթիվ: Հաղթանակ, որը հայության շրջանում նոր հույս ու հավատ արթնացրեց ապագայի նկատմամբ, վերափոխեց մոտեցումն ու վերաբերմունքը պետության հանդեպ:

Այսօր, առավել քան երբևէ, մեր երկրում բացառիկ հնարավորություն է ստեղծվել շտկելու պետության ողնաշարը, մերժելու արատավոր երևույթները, արժևորելու յուրաքանչյուր քաղաքացու դերը, ամրագրելու օրենքի գերակայությունը և նոր դուռ բացելու դեպի զարգացող Հայաստան: Ուստի եկե՛ք յուրաքանչյուրս մեր հնարավորությունների շրջանակում անենք առավելագույնը՝ մեր երազանքների հայրենիքը կերտելու գործում:

Հավատացե՛ք, մենք կարող ենք: Դրա ապացույցը մեր դարավոր պատմությունն է և ոչ վաղ անցյալի իրադարձությունները, որոնք կրկին անգամ փաստեցին, որ հայ ժողովուրդն անպարտելի է, իսկ ցանկությունը՝ իրականանալի, երբ միասնական է: Մեր մեծ ընտանիքը՝ Հայաստան աշխարհը, և նրա մասնիկը հանդիսացող Արմավիրի մարզը շենացնելու միասնական ցանկությամբ ու վճռականությամբ էլ եկե՛ք մուտք գործենք 2019 թվական:

Սիրելի՛ բարեկամներ, Այս օրերին բոլորիս օջախներում, մտքում ու խոսքում գերիշխում է հույսը, հավատն ու սերը, որն ավելի է ջերմացնում մեր իրականությունը՝ մեծ ուժ պարգևելով մեզանից յուրաքանչյուրին: Եվ թո՛ղ հենց այդ դրական էներգիայի ուժն էլ մեզ առաջնորդի ողջ տարվա ընթացքում:

Կրկին անգամ շնորհավորելով բոլորիդ ամանորյա տոների կապակցությամբ՝ ցանկանում եմ, որ գալիք տարում խաղաղ երկնքի ներքո հասնեք ձեր փոքր ու մեծ, անձնական ու համընդհանուր նպատակների իրականացմանը: Թո՛ղ 2019-ը նշանավորվի ցանկալի ձեռքբերումներով և նորանոր հաջողություններով: Ամենայն բարիք բոլորիս:

ՀՀ Արմավիրի մարզպետ՝

Համբարձում Մաթևոսյան